# «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

**Մրցույթի նպատակը՝**

1. Երևանի քաղաքապետարանի կողմից հասարակական տրանսպորտի շահագործման համար սույն հայտարարությանը կից ներկայացված էսքիզային նախագծով ամրագրված չափորոշիչներին համապատասխան սեղմված բնական գազի կայանի կառուցման աշխատանքների իրականացման աշխատանքների կատարումն է.

2. Երևանի քաղաքապետարանի կողմից հասարակական տրանսպորտի շահագործման համար բնական գազի մատչելի պայմաններով ձեռքբերումը.

3. Երևանի քաղաքապետարանի կողմից հասարակական տրանսպորտի շահագործման համար բնական գազի հնարավորինս մոտիկ վայրից ձեռքբերումը,

4. Երևանի քաղաքապետարանի կողմից հասարակական տրանսպորտի շահագործման համար բնական գազի ձեռքբերման նպատակով ժամանակի խնայումը:

**Մասնակցության պայմանները՝**

1. Մրցույթին ներկայացված առաջարկների քննարկումը, գնահատումը, արդյունքների ամփոփումը և որոշման ընդունումը կատարվում է մրցույթի կազմակերպման հանձնաժողովի կանոնակարգի համաձայն:

2. Մրցույթին կարող են մասնակցել իրավաբանական անձինք:

3. Մրցութային փաթեթները ընդունվում են մրցույթի հրապարակման օրվանից 10 օրյա ժամկետում:

4. Մրցութային փաթեթները ներկայացվում են մրցութային հանձնաժողովի քարտուղարին, որն ստորագրությամբ ընդունում է փաթեթը, մասնակցին՝ տրամադրելով ստացական:

5. Հաղթողը մրցույթով նախատեսված աշխատանքները պետք է կատարի համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերը ստանալուց հետո չորս ամսվա ընթացքում:

6. Մրցույթը բաց է և անցկացվում է մեկ փուլով:

**Փաթեթների ներկայացման վերջնաժամկետ՝**

1. Ոչ ուշ քան մրցույթի հրապարակային ծանուցումից 10 աշխատանքային օր հետո հետևյալ հասցեով՝ Արգիշտիի 1, հեռախոս +37411514155/

**Փաթեթին ներկայացվող պահանջները՝**

Յուրաքանչյուր մասնակից պետք է փակ ծրարում ներկայացնի սույն որոշման 4-րդ հավելվածով հաստատված դիմումի ձևին համապատասխան լրացված և կնքված դիմումը և դրան կից ներկայացնի ստորագրված հայտի տարբերակը: Մրցույթային փաթեթը ներկայացվում է սույն հրապարակային ծանուցմամբ նշված օրերին: Փակ ծրարի վրա չպետք է լինեն որևէ գրառումներ: Սույն պայմանը չպահպանելու դեպքում փաթեթը չի մասնակցի մրցույթին:

Եթե ծրարում առկա լինի երկու հայտ, կամ հայտում նշված լինեն առաջարկված տարբերակներից երկուսը կամ ավելին, ապա տվյալ մասնակիցի հայտը չի քննարկվում:

Յուրաքանչյուր մասնակից կարող է ներկայացվել միայն մեկ մրցութային հայտ:

**Կապ՝**

Հարցերի համար կարող եք կապ հաստատել մրցույթի հանձնաժողովի քարտուղարի հետ, nana.abelyan@yerevan.am էլ փոստով/, Հեռ. +37411514155:

**Այլ պայմաններ՝**

Այն դեպքում, երբ մրցույթում ներկայացված հայտերի գնահատման ժամանակ մասնակիցները ստանում են հավասար գործակիցներ, ապա հանձնաժողովը հավասար միավորներ ստացած մասնակիցներին հրավիրում է բաց բանակցությունների, որի անցկացման վայրի և ժամի մասին մասնակիցները տեղեկացվում են նիստի ժամանակ կամ իրենց կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին համապատասխան ծանուցագիր ստանալով: Հասավար միավորներ ստացած մասնակիցներից մրցույթում հաղթող է ճանաչվում բանակցությունների արդյունքում ավելի ցածր միավորներ ստացած մասնակիցը, իսկ հավասար միավորներ ստացած որևէ մասնակցի կողմից բանակցությունների ընթացքում հաղթող չճանաչվելու դեպքում անցկացվում է նոր մրցույթ:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքվելու է սույն մրցույթը հայտարարելու վերաբերյալ Երևանի քաղաքապետի որոշմամբ հաստատված օրինակելի ձևի պայմանագիր, որով ամրագրված պարտավորությունների կատարումը պարտադիր է կողմերի համար: